

Քիլիլեմս Փիլեյն Տիլբորի 1945, ըստիս 1-ի բիւիճի մէջ՝ Սիեկսարը S. Ըրվիլին հայկական հարցի մասին ըրած է կարգ մը շահեկան խորհրդածութիւններ, գ ո ռ ս րարգմանաբար կը ներկայացրնեն մեր բնութեցողներուն:

Մանօթ. Խմբ.

Արտաքին Գործերու օգնական քարտուղար, քաղցրարարոյ և ուշիմ Սրբ Ալէքսանդր Քէտուկէնը, մէկ քանի օրէն ինքզինքը բրիտանական ասանդական քաղաքականութեան պահապանի դերին մէջ պիտի գտնէ, երբ թրքական արտաքին գործերու նախարար Հասան Սաքան՝ Միացեալ Ազգերու Համաձայնողի վերադարձի իր ճամբուն վրայ՝ այցելութիւն մը տայ իրեն:

Երկու սերունդներ, զորս Լոնտոն վազուց մոտցուած կը նրկատէր, վերստին պիտի յաճախեն Հուայի-Տոյր: Մէկը՝ 200 տարիներէ ի վեր Արեւելեան խնդիր անունով ճանօթ հարցն է — զոյս-գիծակիր Տարտանէլի նեղուցներուն, որոնք կը միացնեն Միջերկրական և Սև ծովերը: Միւսը Հայկական Հարցն է, որ ուշագրաւ դարձաւ, երբ Ռուս-թրքական 1877-1878-ի պատերազմէն յետոյ Պերլինի վեհաժողովին մէջ տէրութիւնները ստիպեցին Սուլթանը որ ճանչնայ իր Գրիտանեայ Հարաւաններուն տարրական իրաւունքները:

Այս հարցերն ուրուականներէն Սաքայի և Անգարայի կառավարութեան միւս անդամներուն համար: Անոնք բնգոսա վերակենդանացան անցեալ շարաթ, երբ Թուրքիոյ Սովետական դեպան Աերթէյ Վինոկրատոֆ փոխանցեց ճանուցարար մը, որ կը գծէր Սովետ - Թրքական 20-ամեայ բարեկամութեան մը նոր գաշինքին նախապայմանները:

Այդ նախապայմաններէն առաջինով Ռուսիա կը պահանջէ առանձնաշնորհեալ դիրք մը Տարտանէլի վերհարգութեան մէջ: Նոյն իսկ լուր կը շրջի թէ սովետական կառավարութիւնը կը ցանկայ զինուորական և նաւային կայաններ ունենալ նեղուցներուն վրայ, նման այն կայաններուն զորս ստացաւ Պալթեան երկիրներէն և Ֆինլանդիայէն, առաջինները կուլ տալէ առաջ:

Երկրորդով կը պահանջուի որ Ղարսի և Արտասանի շրջանները, որոնք կը գտնուին Թուրքիոյ արեւելեան սահմաններուն վրայ և սահմանակից են Հայաստանի Ընկերվարական Սովետ Հանրապետութեան, վերադարձուին Հայաստանի:

Արտաքին գործերու կոմիտար Մոլոթով Թուրքիոյ և Ռուսիոյ միջև գոյութիւն անցող բարեկամութեան գաշինքը չեղեալ հոշակեց անցեալ Մարտին, երբ կը լրանար անոր պայմանաժամը: Ռուսական նոր ճանուցարարն այժմ կուգայ յայտնելու պատճառը: Ռուսիա նպատակ ունի տարածուիլ գէպի Միջերկրականը, ինչ որ ան փորձած էր ընել անցեալ երկու դարերու ընթացքին և ձախողած՝ բրիտանական մըլտական ընդգրկութեան պատճառաւ:

Քէտուկէն՝ Սաքայի հետ ունենալիք իր գրոյցներու և կարգադրութեանց ընթացքին՝ նախքան վերջինին տեսակցութիւնը Աիւնսթըն Զրրչիլի և արտաքին գործերու նախարար Էնթրնի Իւարնի հետ, և թէ վերջինն բատրականին ապաքինած ըլլայ իր հիւանդութենէն, ապահովաբար աւելի շատ մտահոգուած պիտի ըլլայ Տարտանէլի ապագայով քան թէ Փոքր Ասիոյ սահմանադրիտուն վրայ գտնուող Հայկական գաւառներով:

Լոնտոնի մէջ նեղուցներու գոյափոխակիր կը նկատուի կայսրութեան համար առաջնակարգ կարեւորութիւն ունեցող հարց մը, մինչդեռ Ռուսիոյ Արեւելքի մէջ ծաւալուած ի վնաս Թուրքիոյ շահեկանութիւն մը կը ներկայա-

ցրնէ միայն իրր Մոսկուայի մէկ նոր արաւայտաութիւնը իր ազգեցութիւնն ու զօրութիւնը տարածելու ձգտումին: Յարգ Լոնտոն մեծ մտահոգութիւն ցոյց չի տուաւ նմանօրինակ ծաւալման արաւայտաութեանց մասին Պալթիկի, Լեհաստանի, Կեղրոնական Եւրոպայի և Պալքաններու մէջ:

1936-էն ի վեր նեղուցները կառավարուած են Մոնթրէոյի համաձայնագրով: Սոյն համաձայնագրին ղէմ Ռուսերը ցարդ շատ պրոպագանդ մղած են և պահանջած են այս ջրուղիին ազատ գործածութիւնը, ինչ որ անոնք կանխաւ արդէն վայելած են Մոնթրէոյի կարգադրութեան ներքեւ պատերազմի թէ՛ խաղաղութեան տակ: Թուրքիա Երբեք այ գոչած չէ նեղուցները: Ան միայն իր պահակ կանգնած է անոնց վրայ: Գերման գորքի ներկայութիւնն էր Եղէականի կողմներուն իրայ և գերման մարտանաւերու և ընդժողովաներու ներկայութիւնը՝ Սև ծովուն մէջ, որ սահմանափակեցին այդ ազատութիւնը:

Այս շրջաններն ի պատասխան Ռուսիա կը պատճառարանէ — պատճառարանութիւն մը որ Թուրքիոյ ղէմ մղուած ուսական կակղացուցիչ պրոպագանդին զօրաւոր կէտերէն մին է հանդիսացած — թէ Թուրքիոյ չէզոքութիւնն իրապէս նպաստաւոր է եղած Առանցքի տէրութեանց: Թէպէտ ասիկա հարցական է, Թուրքերն հասանաբար Լոնտոնը չի մը անտարրէր գտնեն իրենց գատին հանդէպ այս իսկ պատճառաւ: Թուրքիա իր աչքերն Անգլիոյ վրայ յառած է հիմնուած 1940-ի փոխադարձ օգնութեան դաշինքին վրայ: Այդ դաշինքը կը արամադրէ փոխադարձ աջակցութիւն, երբ պատերազմ ծաղի արեւելեան Միջերկրականի վրայ: Ան շարդուեցաւ երկրորդ աշխարհամարտի սկիզբները, որովհետեւ սկիզբները Դաշնակիցներուն համար ձեռնուտ էր որ Թուրքիա չէզոք մնար: Լոնտոն գառնացած է, սակայն, որ վերջին օրերուն Թուրքիա չբերաւ իր մասնակցութիւնը կուսին:

Բայցեւայնպէս Մեծն Բրիտանիա իր կայսերական դիրքը չի վտանգեր այդ դժգոհանքին պատճառաւ: Ապահովաբար ան համակրանքով պիտի ունկնդրէ Թուրքիոյ առարկութեան՝ թէ Մոնթրէոյի համաձայնագիրը չի կրնար փոփոխութեան ենթարկուիլ առանց բոլոր ստորագրող պետութեանց հաւանութեան: Համաձայնագիրն ստորագրուած էր, Անգլիայէն և Թուրքիայէն գատ, Ռուսիոյ, Յունաստանի, Ետիօպիայի, Ռումանիոյ, Պուլկարիոյ, Ֆրանսայի և ձարոնի կողմէ: Ըարոնը թշնամի մէջ: Ֆրանսա, Միւրիոյ միջադէպէն ետք, Արեւելեան Հարցին մէջ այլեւս մեծ ազդեցութիւն մը չունենար: Ետիօպիայի, Ռումանիա և Պուլկարիա ուսական խամաճիկներ են: Հետեւաբար հարցը իրականին մէջ վերածուած է Անգլիաթրքո - ուսական վէճի մը: Ան կրնայ լուրջ հանգամանք ստանալ, որովհետեւ առաջին անգամն ըլլալով Ռուսիոյ ծաւալումի ծրագիրը կ'ընդհարուին Բրիտանիոյ անմիջական շահերուն հետ:

Այսօրուան պետական մարդիկն ուրիշ սեւէ հարցէ աւելի հայկական հարցի վերաբաղէն կրնան օգտուիլ: Հայաստան անցեալ պատերազմի Լեհաստանն էր: Անոր բախար փճուեցաւ պատեհապաշտութեամբ և զրժուած խոստումներով: Եւ, ինչպէս ամէն նմանօրինակ պարագայի մէջ, ան կը վերադառնայ նոր կերպարանքով մը: Անիկա ուրիշ օրինակ մը ևս կը հայթայթէ թէ՛ սրատեսապաշտութիւնը միշտ անօգուտ է:

Առաջին աշխարհամարտի ընկերէն ի վեր հայերը կուուեցան դաշնակիցներու կողքին: Անոնք

կուուեցան ուսական բանակներու մէջ, ինչպէս նաեւ կաղմեցին կամաւորական գունդեր: Իրենց այդ քայլին համար անոնք փճուեցին անաւոր գին մը: Զարդերն ու տեղահանութիւններէ, որոնց գիմեցին Թուրքերը փոխադրէի համար — ընաջնջուածի ծրագիր մը յար և նման այն ծրագրին զոր Նացիները փորձեցին գործադրել Լեհաստանի և այլ երկիրներու մէջ — արժեցին աւելի քան մէկ միլիոն կեանքեր:

Անոնց մատուցած ծառայութիւնն ա'յնքան մեծ էր և հայկական հարցի լուծումն ա'յնքան ստիպողական, որ Նախագահ Ուորո Ուիլսոն տէրութիւնները մղեց հոշակելու անկախ հայկական հանրապետութիւն մը: Ներկայ փոքրիկ հողամասին, որ ներկայիս կը կազմէ սովետական Հայաստանը, պիտի կցուէին Թուրքիոյ արեւելեան մասի հայկական տարածութիւնները — կարնոյ, Տրապիզոնի, Վանի և Բաղէշի նահանգները: Միացեալ Նահանգները ստանձնելու էր Հայաստանի հոգաւարութիւնը, բայց Մերակոյտը մերժեց փաւրացնել այդ գաղափարը:

Այս հանրապետութիւնն իր գոյութիւնը պահեց իսկ քանի մ'ամիսներ (°): Քէմալ Աթաթուրք իշխանութեան գլուխն անցած էր և մտադրած էր իր կամքն առաջ բերլ: Դաշնակիցները պատակաւորաւ չիին: Ռուսիա կը զրանուէր քաղաքային կուսի քառսին մէջ: Թուրքերը յարձակում գործեցին հայկական հանրապետութեան վրայ, և փոխադարձ զինուորներով ձեռք բերուեցաւ կարգադրութիւն մը, որով Թրքահայկական հողերը վերադարձուեցան իրքական հանրապետութեան: